

## Ի՞նչ են աուտիզմի սպեկտրի խանգարումները:

Աուտիզմի սպեկտրի խանգարումները [Autism Spectrum Disorders] (ASD) ուղեղի հետ խնդիր ունենալու պատճառով առաջացած զարգացման հիվանդությունների մի խումբ է: Գիտնականները դեռևս ճշգրիտ չգիտեն, թե ինչն է հատակապես այս խնդրի պատճառը: ASD-ները կարող են ազդեցություն ունենալ մարդու գործունեության վրա տարբեր մակարդակներով՝ սկսած շատ թույլից մինչև խիստ: Սովորաբար ոչինչ չկա ASD ունեցող մարդու արտաքին տեսքի հետ կապված, որը կարող է նրան հեռու պահել մյուս մարդկանցից, բայց նրանք կարող են հաղորդակցվել, շփվել, իրենց պահել և սովորել այնպիսի ձևերով, որոնք տարբեր է շատ մարդկանցից: ASD-ներ ունեցող մարդկանց մտածելու և սովորելու ունակությունները կարող է տարբեր լինել՝ տաղանդավորից մինչև խիստ դժվարություններ ունեցող: Աուտիստիկ խանգարումը [Autistic disorder] ASD-ի ամանաճանաչված տեսակն է, բայց կան նաև ուրիշ տեսակներ՝ ներառյալ «ամենաթափանց զարգացման խանգարում- ոչ այլ կերպ բնորոշված» [pervasive developmental disorder-not otherwise specified] (PDD-NOS) և Ասպերգեր սինդրոմ [Asperger Syndrome]:

## Ո՞րոնք են ASD-ների որոշ նշանները:

ASD-ներ ունեցող մարդիկ կարող են խնդիրներ ունենալ հասրակական, հուզական և հաղորդակցական կարողությունների հետ: Հնաավոր է, որ նրանք կրկնեն որոշակի վարքագծեր կամ չցանկանան փոխվել իրենց առօրյա գործողություններում: ASD-ներ ունեցող շատ մարդիկ նաև սովորելու, ուշադրություն դարձնելու կամ իրերի վերաբերվելու տարբեր ձևեր ունեն: ASD-ները սկսվում են վաղ մանկությունից և պահպանվում են մարդու ամբողջ կյանքի ընթացքում:

## ASD ունեցող երեխան կամ չափահասը կարող է.

- Չիաղալ «ձևացնելու» խաղեր (ձևացնի թե «կերակրում» է տիկնիկին),
- չմատնանշել առարկաներին հետաքրքրություն ցուցաբերելու համար (ցույց տա թոչնոդ ինքնաթիռ),
- չնայել առարկաներին, երբ մեկ ուրիշ մարդ դրանք ցույց է տալիս,
- դժվարանալ ուրիշներին հասկանալ կամ ընդունել կամ ընդհանրապես հետաքրքրություն չունենալ ուրիշ մարդկանց նկատմամբ,
- խուսփել աչքերի մեջ նայել և ցանկանալ մենակ լինել,



- կրկնել կամ արձագանքել իրեն ասված բառերը կամ արտահայտությունները կամ կրկնել բառեր կամ արտահայտություններ նորմալ լեզվի փոխարեն [echolalia](կրկնախոս),
- գերադասել, որ իրենց չգրկեն կամ փաթաթվեն, կամ կարող են փաթաթվել, երբ իրենք են ուզում,
- անտեղյակ թվալ, երբ ուրիշ մարդիկ խոսում են իրենց հետ, բայց պատասխանել այլ ձայների,
- շատ հետաքրքրված լինել մարդկանցով, բայց չիմանալ ինչպես խոսել, խաղալ կամ շփվել նրանց հետ,
- դժվարանալ ուրիշների զգացմունքները հասկանալ կամ իր սեփական զգացմունքների մասին խոսել,
- դժվարություն ունենալ արտահայտելու իրենց կարիքները՝ օգտագործելով տիպիկ բառեր կամ շարժումներ,
- շարունակաբար կրկնել գործողությունները,
- հարմարվելու հետ խնդիրներ ունենալ, երբ ռեժիմի փոփոխություն է լինում,
- անսովոր ռեակցիա ունենալ իրերի՝ հոտի, համի, տեսքի, զգացողության կամ ձայնի նկատմամբ,
- կորցնել հմտություններ որոնք մի ժամանակ ունեցել են (օրինակ՝ դադարեն ասել բառեր, որ մի ժամանակ օգտագործում էին):

## Ի՞նչ կարող եմ անել, երբ կարծում եմ, որ իմ երեխան ունի ASD:

Խոսե՛ք Ձեր երեխայի բժշկի կամ բուժքրոջ հետ: Եթե Դուք կամ Ձեր բժիշկը կարծում եք, որ կարող է խնդիր լինել, ապա խնդրեք ուղեգիր, որպեսզի դիմեք զարգացման մանկաբույժի կամ այլ մասնագետի կամ կարող եք կապվել Ձեր տեղական վաղ տարիքի միջամտության գործակալությանը (մինչև 3 տարեկան երեխաների համար) կամ հանրակրթական դպրոց (3 տարեկան և ավելի մեծ երեխաների համար): Որպեսզի պարզեք, թե ում հետ խոսեք Ձեր տարածքում, կարող եք կապվել Հաշմանդամ Երեխաների և Երիտասարդների Ազգային Տեղեկատվական Կենտրոն (NICHCY)՝ գրանցվելով [www.nichcy.org](http://www.nichcy.org) կամ զանգահարելով 1-800-695-0258: Ավելին Հիվանդությունների Վերահսկողության և Կանխարգելման Կենտրոնները (CDC) իրենց Աուտիզմի Տեղեկատվական Կենտրոնի ինտերնետային կայքում ([www.cdc.gov/ncbddd/dd/aic/resources](http://www.cdc.gov/ncbddd/dd/aic/resources)) ընտանիքների համար տեղեկատվության հղումներ [\[link\]](#) ունեն:

Հենց հիմա, ASD-ների հետազոտության վրա հիմնված բուժումը՝ ինտենսիվ կառուցողական հմտությունների ուսուցումն է, որին հաճախ կոչում են վարքագծային միջամտություն: Շատ կարևոր է, որ այս միջամտությունը սկսեք հնարավորինս շուտ, որպեսզի օգնեք Ձեր երեխային հասնելու իր լրիվ կարողություններին: Վաղ գործելը կարող է իրական տարբերություն ստեղծել:

Սովորե՛ք նշանները: Վա՛ղ գործեք: 1-800-CDC-INFO [www.cdc.gov/actearly](http://www.cdc.gov/actearly)